



**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

**AUA** American University  
of Armenia

ԱՄԵՐԻԿԱՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՅԱԿՈՒՆԵՑ



**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԱՌԿԱ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Ձեկույց**

Ապրիլ 2022

Ավետիսեան Օնանեան առողջապահական ծառայությունների հետազոտման և  
զարգացման կենտրոն

Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետ

Հայաստանի ամերիկյան համալսարան

*Մույն գեկույցը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ  
Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Այստեղ  
արտահայտված նյութի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և  
պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության  
տեսակետները*

## ՆԱԽԱԲԱՆ

Հետազոտությունն իրականացվել է «Աջակցություն՝ կառավարելու կորոնավիրուսային հիվանդության և այլ վարակիչ հիվանդությունների բնկումները Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Կորոնավիրուսային հիվանդության և այլ վարակիչ հիվանդությունների բնկումների կառավարմանն աջակցելու ծրագիրը հզորացնում է Հայաստանի ազգային ներուժը՝ դիմագրավելու կորոնավիրուսային հիվանդության և այլ վարակիչ հիվանդությունների բնկումներին՝ նպաստելով հանրային առողջապահական անհետաձգելի իրավիճակներին պատրաստվածության և արձագանքի ռազմավարության բարելավմանը: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) և իրականացվում Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամի կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ:

Ծրագրի բաղադրիչներից մեկն է ամրապնդել ՀՀ կառավարության կարողությունները՝ ձևավորելու և իրականացնելու հանրային քաղաքականություն և ծառայություններ, որոնց նպատակն է կանխել և արձագանքել հանրային առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակներին: Այս բաղադրիչի իրագործումը սկսվել է հետազոտությամբ, որի նպատակն էր համապարփակ ուսումնասիրել արտակարգ իրավիճակներին արձագանքման առկա համակարգերի ուժեղ և թույլ կողմերը՝ հաշվի առնելով ոչ միայն առողջապահական, այլ նաև սոցիալ-տնտեսական և իրավական բաղադրիչները: Իրավական ոլորտի ուսումնասիրության արդյունքները համալրվել են 2022թ.-ի մարտի 29-ի տարբեր շահառուների ներկայացուցիչների հետ կազմակերպված հանրային քննարկման արդյունքում և ներկայացված են ստորև: Հետազոտությունը կատարվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի կողմից 2021թ.-ին:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության առաջին փուլում իրականացվել է առկա փաստաթղթերի համապարփակ ուսումնասիրություն, այդ թվում՝ իրավական ակտեր, Սահմանադրություն, օրենքներ, կառավարության և պարետի որոշումներ, հետազոտություններ և զեկույցներ, միջազգային փորձի վերլուծություն: Հետազոտության որակական բաղադրիչն ընդգրկել է խորացված հարցազրույցներ թիրախային խմբերի մի շարք մասնակիցների հետ, ինչպիսիք են՝ պետական կառավարման համակարգի մարմինների (նախարարությունների) ներկայացուցիչներ, նախկին և ներկա քաղաքականություն մշակողներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հարցազրույցի մասնակիցներն ընտրվել են նպատակային կերպով: Խորացված հարցազրույցները իրանակացվել են 2021 թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին: Ընդհանուր առմամբ իրականացվել է 34 խորացված հարցազրույց՝ առցանց տեսահաղորդակցությամբ կամ դեմատեղեմ հանդիպման միջոցով, միջինում 40 րոպե տևողությամբ: Հետազոտության գործիքը ստեղծվել է՝ հիմնվելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ COVID-19-ի ռազմավարական պատրաստվածության և արձագանքման ծրագրի (WHO COVID-19 Strategic Preparedness and Response Plan)<sup>1</sup> վրա և ադապտացվել շահառուների յուրաքանչյուր խմբի համար: Երրորդ փուլում՝ գրականության համապարփակ ուսումնասիրությունից ու որակական հետազոտությունից հետո ստացված արդյունքները ներկայացվել են թիրախային խմբերին և շահագրգիռ կողմերին՝ հայտնաբերված խնդիրները նրանց հետ քննարկելու և համատեղ կերպով լուծումներ առաջարկելու նպատակով:

Հետազոտության համառոտ արդյունքներն ըստ ենթաբաժինների ներկայացված են ստորև:

---

<sup>1</sup> COVID-19 Strategic preparedness and response plan. Geneva: World Health Organization; 2021. License: CC BY-NC-SA 3.0 IGO. Available at: <https://www.who.int/publications/i/item/WHO-WHE-2021.02>

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

### 1. COVID-19-ի առաջացրած հիմնական մարտահրավերները/խնդիրները

Հարցազրույցին մասնակցած անձինք որպես COVID-19-ի գլխավոր մարտահրավեր նշել են առաջին հերթին իրավիճակի անկանխատեսելիությունն ու համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի պայմաններում գործելու ռազմավարական գործողությունների պլանների բացակայությունը: Բացի այդ՝ հիմնավոր տեղեկատվության, բնակչության իրազեկման արշավների պակասը տվյալ ճգնաժամային իրավիճակում է՛լ ավելի է բարդացրել նրանց աշխատանքը և նվազեցրել այդ աշխատանքի արդյունավետությունը: Համավարակի ընթացքում որպես խանգարող հանգամանքներ հարցազրույցի մասնակիցները նշել են նաև իրավիճակի անկանխատեսելիությունից բխող խուճապը, ինչպես նաև ստեղծված պայմաններում հապճեպ որոշումներ կայացնելու ճնշումը, թեպետ նշվել է նաև, որ նման խնդիր չէր լինի, եթե գոյություն ունենային ճգնաժամային իրավիճակներում գործողությունների հստակ ռազմավարական պլաններ: Մասնակիցներից մեկը նշել է՝

*«Ինձ թվում է, որ ոչ միայն մեր, այլև շատ կառույցների դեպքում կարծես չունեինք մի ռազմավարություն կամ ծրագիր, թե ինչ պետք է անել նման իրավիճակներում: Արտակարգ դրություն էր հայտարարվել, արտակարգ իրավիճակ էր, և մենք մեր անելիքները կարծես այդքան լավ չէինք պատկերացնում: Փորձեցինք տեղում հասկանալ, թե որոնք են առաջնահերթությունները՝ ով ինչպես աշխատի, ով երբ գնա, ով ում հետ շփվի: Ունեինք տեղեկատվական պակաս, իրազեկման պակաս: Դա առաջնահերթ պետության պարտականությունն էր, բայց այս դեպքում դա նաև դառնում է գործատուի պարտականությունը, որովհետև գործատուն պետք է աշխատողին պատրաստեր դրան, իսկ գործատուին պետք է պատրաստեր պետությունը»:* (Մասնակից 1)

Մեկ այլ մասնակից նշել է, որ խնդիրը ոչ թե պլանների բացակայությունն էր, այլ դրանց ու Արտակարգ իրավիճակների ոլորտի օրենսդրության անհամապատասխանությունը.

«Արտակարգ իրավիճակների ոլորտի օրենսդրությունը նմանատիպ արտակարգ իրավիճակների համար պատրաստ չէր, հարմար չէր, այսինքն՝ արտակարգ իրավիճակներում հիմնականում վերաբերում էր պատերազմներին, թունավորումներին էլ չէ, ասենք ատոմակայանի պայթյուն և այլն, և այլն, երկրաշարժ: Այսինքն՝ օրենքը սրան պատրաստ չէր, և ըստ այդմ այդ կարգավորումները օգտագործվեցին այնքանով, որքանով կիրառելի էին արտակարգ իրավիճակներին: Թեպետ Առողջապահության նախարարությունն ուներ որոշակի պլաններ, բայց այդ պլանները և արտակարգ իրավիճակների մասին օրենքը իրար չէին համապատասխանում:» (Մասնակից 2)

## **2. Կառավարության/Պարետատան արձագանքը համավարակին**

Կառավարության և մասնավորապես Պարետատան արձագանքը համավարակին հարցազրույցի մասնակիցները հիմնականում դրական են գնահատել: Որպես Պարետատան աշխատանքների հիմնական մարտահրավեր նշվել է մարդկային ռեսուրսների պակասը. համավարակի ճգնաժամային ամիսներին Պարետատան՝ 3-5 հոգուց բաղկացած անձնակազմն իր վրա է վերցրել նախարարությունների աշխատանքների համակարգման գործը: Մյուս կողմից՝ նշվել է խուճապային իրավիճակի և դրանով պայմանավորված հանրության հետ պատշաճ հաղորդակցության կազմակերպման անհնարինությունից բխող ճնշումը: Մասնակիցներից մեկը նշել է՝

«Չկար հանրային նորմալ կոմունիկացիա: Երբ որևէ որոշում էր ընդունվում, դրանից հետո էինք ստիպված հաղորդակցության մեջ մտնում. ստեղծվում էր քառու, անկազմակերպ վիճակ: Արագությունը, անկողմնորոշվածությունը ամենավատ խոչընդոտներն էին, որոնք, ըստ երևույթին, ամբողջ աշխարհում են եղել, որովհետև հիմա դարձյալ, հատկապես Առողջապահության նախարարությանը մեղադրում են, թե սկզբից ասում են մի՛ կրեք դիմակ, հետո ասում, որ ցանկալի է դիմակների կրումը, հետո պարտադրում: Դրանք հրահանգներ էին, որոնք Առողջապահության համաշխարհային կազմակերպության այդ պահի հրահանգներից էին բխում, որոնցով առաջնորդվել են Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան ու

*ելրոպական երկրների մեծ մասը, այսինքն, սա աշխարհին անձանոթ երևույթ էր, ու իրականում հնարավոր չէր կանխագուշակել, թե հիմա ավելի լավ կլինե՞ր դիմակ կրել, թե ոչ»։ (Մասնակից 3)*

Բացի այդ՝ դժվարություններ են առաջացել հենց նախարարությունների հետ համաձայնության գալու, նրանց հանձնարարականներ տալու հարցում, ինչպես նաև տարբեր նախարարությունների և դրանց գերատեսչությունների համատեղ աշխատանքը կազմակերպելու հարցում:

## **2.1. Կառավարության իրավական արձագանքը համավարակին**

Ըստ կատարված ուսումնասիրության և մասնագետների հետ հարցազրույցների՝ թեև հետահայց կերպով ՀՀ կառավարությունը բավականին լավ է արձագանքել համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի պայմաններում, այնուամենայնիվ, եղել են մի շարք օրենսդրական խնդիրներ արտակարգ իրավիճակում գործելու ընթացքում՝ սկսած Արտակարգ իրավիճակների ոլորտը կանոնակարգող համապարփակ օրենքի բացակայությունից մինչև համավարակի ընթացքում որոշումների ընդունման իրավաչափության, համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակներում տարբեր նախարարությունների միջև համագործակցության, հարևան երկրների հետ հաղորդակցության կարգավորման բացակայություն, ինչպես նաև ընդունված որոշումների ու օրենքների՝ հասարակության կողմից պահպանումն ապահովող մարմինների լիազորության սահմանների ու մեխանիզմների հստակության բացակայություն: Համավարակով պայմանավորված արագ արձագանքելու հրատապությունը բացահայտել է իրավական ոլորտի կարգավորումների թերացումներն արտակարգ իրավիճակներում:

Նախ և առաջ, խնդրահարույց է ՀՀ կառավարության՝ 2020թ. մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը, որի համաձայն ստեղծվել և սկսել է գործել Պարետատունը: Հարցազրույցի մասնակիցները նշել են, որ Պարետատան ստեղծումը կարևոր է եղել այն տեսանկյունից, որ նման իրավիճակում կարիք կար մեկ կենտրոնական կառավարման մարմնի: Այնուամենայնիվ, Պարետատուն ստեղծելու որոշման

պահին առկա իրավական հիմքերը խնդրահարույց էին՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտակարգ դրության ողջ ժամանակահատվածում Պարետի որոշումների հիման վրա երկրի ողջ տարածքում կիրառվել են սահմանափակումներ՝ ներառյալ անձնական իրավունքների:

Հարցազրույցի մասնակիցների կողմից արձանագրված մեկ այլ խնդիր էլ նախարարությունների ու դրանց գերատեսչությունների միջև հաղորդակցության արդյունավետ մեխանիզմների բացակայությունն էր: Այս խնդիրը շատ դեպքերում բարդացրել է համավարակի դեմ պայքարի միջոցառումների ու քայլերի սահուն ընթացքը: Մասնակիցներից մեկը նշել է՝

*«Ամենահեշտ տարբերակը այն է, երբ վարչապետի կամ փոխվարչապետի հանձնարարությամբ է լինում: Արտակարգ դրության ընթացքում էլ, երբ որ գալիս էր պահը, որ պետք է տարբեր մարմիններ միմյանց հետ աշխատեին շատ սեղմ ժամկետում, դա արվում էր պարետի հանձնարարությամբ: Փորձը ցույց է տալիս, որ այդ տարբերակը լավ չի աշխատում, որովհետև պետական մարմինների՝ միմյանց հետ աշխատելու արդյունավետության փորձը քիչ է, իսկ եթե ուզում են արդյունավետ համագործակցել, պետք է անձնական կապերով փորձեն աշխատել, որպեսզի մի բան ստացվի: Բայց եթե խոսքը գնում է մեծ մասշտաբի մասին, դա բարդանում է»:* (Մասնակից 1)

Իրավական ոլորտի հաջորդ խնդիրը համավարակի հիմքով արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանների՝ ուղղված կոնկրետ հանրային առողջության ոլորտին, գոյության մասին անտեղյակությունն է: Մասնակիցների մեծամասնությունը տեղյակ չի եղել նման պլանների գոյության մասին: Նաև նշվել է, որ նման պլանների բացակայությունը կամ դրանցից անտեղյակությունը հանգեցրել է արտակարգ իրավիճակում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության անորոշության, քանի որ հենց դեկավար անձնակազմը չի կողմնորոշվել՝ ինչ հրահանգներ տալ իր ենթակայության տակ գտնվողներին, ինչ հստակ քայլեր ձեռնարկել: Մասնակիցներից մեկը նշել է՝



*«Մարսափելի անպատրաստ էինք, քանի որ առաջին հերթին համավարակի վերաբերյալ կարգավորումները գրեթե բացակայում էին, արտակարգ դրության, արտակարգ իրավիճակի վերաբերյալ իրավակարգավորումները չափազանց թերի էին՝ իրավական մի շարք կազուսներով, որոշ սահմանափակումների հարցը, ընդհուպ մինչև Սահմանադրության, մշտապես բարձրացվում էր: Այսինքն, այն իրավակարգավորումները, իրավական ռեժիմը, որն ի սկզբանե դրվել է (արտակարգ իրավիճակ, արտակարգ դրություն), գրվել և մշակվել են գրոյից, բայց դրան հասնել չէր կարելի»:* (Մասնակից 3)

Առաջնորդվելով միջազգային բժշկասանիտարական կանոններով՝ ՀՀ կառավարությունը 2020թ. մարտ ամսին ընդունել և հաստատել է COVID-19 համավարակի կառավարման պլան: Սակայն անհրաժեշտ էր ուսումնասիրել տվյալ պլանի իրատեսականությունը և մշակել դրա և նմանատիպ պլանների իրագործման ու պարբերաբար թարմացման հստակ մեխանիզմներ:

Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակներում հարևան երկրների հետ սահմանային հաղորդակցությանն ու դրա համակարգմանը, այս ոլորտում ևս բացահայտվել է իրավական կարգավորումների պակաս: Մասնակիցները նշել են, որ հարևան երկրների հետ սահմանները փակելու որոշումները կայացվել են հայելային կերպով՝ ըստ տվյալ երկրի համանման որոշման: Մասնակիցներից մեկը նշել է՝

*«Մենք ռեակտիվ էինք: Եթե իրենք փակում էին, մենք էլ հայելային ձևով փակում էինք, որովհետև մեզ համար ի սկզբանե խնդիր էր ոչ մի բաց սահման չունենալը՝ հաշվի առնելով մեր երկրի ունեցած խնդիրները: Այս առումով առհասարակ ամբողջ աշխարհում խնդիր կար: Փոխադարձ կամ իրար հետ ինչ-որ մի բան անելը և այդ ընթացքում կապը պահպանելը պետք է համաձայնեցվի, որպեսզի ցամաքային ճանապարհով կապ ապահովվի, նույնը նաև օդային ճանապարհով»:* (Մասնակից 3)

Իրավական կարգավորման բացակայությունն այս ոլորտում խնդրահարույց է հատկապես մարդասիրական (հումանիտար) նկատառումներից ելնելով, քանզի

պետությունը պետք է կարողանա անգամ արտակարգ իրավիճակի պայմաններում բավարարել բնակչության բժշկական և այլ կարիքները, այնինչ փակ սահմանների և տեղաշարժի սահմանափակումների պատճառով հաճախ սահմանափակվել է նաև բուժօգնություն ստանալու մարդու իրավունքը:

Այլ պետությունների հետ հանրային առողջապահական գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակներում համագործակցության հարցում խնդրահարույց է դիտարկվել նաև այն, որ թեպետ Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականից սկսած աշխատանքներ են իրականացվել միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման ուղղությամբ, հաստատվել և իրականացվել է միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման ծրագիր-ժամանակացույցը, այդուհանդերձ, պետական մարմինների ներկայացուցիչները տեղյակ չեն եղել միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոններից, ինչպես նաև չեն օգտագործել դրանք այլ պետությունների հետ հանրային առողջապահական ռիսկերը համատեղ կարգավորելու նպատակով:

### **3. Հանրային առողջապահությանն ուղղված սահմանափակող միջոցառումները և իրավունքի սահմանափակումները**

Ըստ հարցազրույցի մասնակիցների՝ ի սկզբանե իրավական խնդիրներ են եղել հանրային առողջապահությանն ուղղված սոցիալական միջոցառումների ներդրման և իրագործման հետ կապված: Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքի պահպանմամբ չեն սահմանվել այդ միջոցառումները (դիմակների պարտադիր կրում, մեկուսացում, կարանտին, տեղաշարժման սահմանափակումներ), ինչպես նաև արտակարգ իրավիճակներում սահմանափակող միջոցառումների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների՝ ոստիկանության, տեսչական մարմինների, այլ մարմինների լիազորության սահմանները, սահմանափակող միջոցների կիրառման հստակ մեխանիզմները: Օրենսդրական հստակ ձևակերպումների բացակայությունը բարդացրել է թե՛ ոստիկանության, թե՛ սահմանափակող միջոցառումներ կիրառող

և վերահսկող մարմինների այլ աշխատանքը մի կողմից և հանգեցրել որոշ դեպքերում քաղաքացիների իրավունքների սահմանափակման մյուս կողմից: Այդուհանդերձ, ընդհանուր առմամբ, մասնակիցները նշել են, որ սահմանափակումները «հիմնականում հիմնավորված են եղել, արտառոց շեղումներ իրավունքի սահմանափակումների առումով չեն եղել»: Այնուամենայնիվ, անհրաժեշտություն կա բարելավելու արտակարգ իրավիճակներում բնակչության հետ հաղորդակցության մեխանիզմները: Մասնակիցներից մեկը նշել է՝

*«Պետք էր հետազայում մի քիչ ավելի շատ աշխատանք տանել հանրության հետ, բացատրել, չնայած, որ դա էլ հետազայում փորձեց արվել, բավականին ռեսուրս ծախսվեց հաղորդակցման ռազմավարություն մշակելու վրա: Ամեն ինչ, ցանկացած բան անելը կամ չանելը հանրության դիմակայությանն էր հանդիպում» (Մասնակից 3)*

Հանրության հետ հաղորդակցության հարցում թերացումների գլխավոր պատճառներից մեկը իրականացված սոցիալական ու առողջապահական միջոցառումների մշտադիտարկման ու գնահատման բացակայությունն է: Ըստ մասնակիցների՝ եթե համավարակի ընթացքում լինեի մշտադիտարկող մարմին, որը կդիտարկեր իրավիճակն ու իրականացվող միջոցառումները և հանդես կգար դրանք բարելավելու առաջարկներով, ապա կառավարությունը և մասնավորապես Պարետատունը անկախ աղբյուրից տեղեկություններ կստանար իր ընդունած որոշումների իրավաչափության և արդյունավետության վերաբերյալ: Դա թույլ կտար կառավարությանը, պետական կառավարման համակարգի մարմիններին նախ անհրաժեշտության դեպքում շտկել որոշումներն ու դրանց իրականացման մեխանիզմները, ինչպես նաև ավելի արդյունավետ կերպով ազգաբնակչությանն իրազեկել ձեռնարկված միջոցառումների, դրանց օգուտների, ինչպես նաև հանրային առողջապահական ռիսկերի մասին:

Ըստ հարցազրույցի մասնակիցների մեկ այլ խմբի՝ իրավունքի սահմանափակումներ, այուամենայնիվ, եղել են. հիմնականում սահմանափակվել

են ազատ տեղաշարժի, խոսքի ազատության, անձնական կյանքի գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքները: Մասնակիցներից մեկը նշել է՝

*«[...] երբ մարդը ֆիզիկապես չի կարող լքել տարածքը, դա ազատությունից զրկում է, երբ ասում են, որ դուք իրավունք չունեք լքել տարածքը: Մարդը իրավունք ունի փաստաբան ունենալու, իրավունք ունի այդ որոշումը դատարանում ներկայացնելու՝ նրան այդ հնարավորությունը տալու դեպքում»: (Մասնակից 4)*

Թեպետ մասնակիցների պնդմամբ համավարկի հիմքով սահմանված արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում կիրառված միջոցառումները եղել են համաչափ և իրավիճակից բխող, այդուհանդերձ, պետք է փաստել, որ Արտակարգ դրություն իրավական ռեժիմի դադարեցումից հետո չի կատարվել իրականացված միջոցառումների խորքային ուսումնասիրություն, մասնագետների (նաև՝ իրավաբան մասնագետների) կողմից չի վերլուծվել կիրառված սահմանափակումների և իրականացված միջոցառումների համաչափությունը:

## **ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ընդհանուր առմամբ՝ հարցումների մասնակիցները դրական են գնահատել կառավարության և մասնավորապես Պարետատան ջանքերն ու կատարված աշխատանքը արտակարգ դրության ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, համավարակով պայմանավորված արտակարգ դրությունն ի հայտ է բերել իրավական դաշտում առկա մի շարք խնդիրներ՝ սկսած Արտակարգ իրավիճակների ոլորտի օրենսդրության թերություններից մինչև Պարետի որոշումների սահմանադրականության հետ կապված հարցեր, պետական կառավարման համակարգի մարմինների լիազորությունների անհստակության, նախարարությունների միջև հաղորդակցության արդյունավետ մեխանիզմների բացակայությունից մինչև հարևան երկրների հետ համագործակցության և հաղորդակցության կարգավորման խնդիր, անձնական իրավունքների

սահմանափակումներից մինչև ընդունված սահմանափակումների կիրարկման համաչափության հետ կապված խնդիրներ:

Հետազոտության արդյունքում հայտնաբերված խնդիրները ներկայացվել են շահագրգիռ կողմերին, որոնց հետ քննարկումների արդյունքում առաջարկվում են հետևյալ գործողությունները.

### 1. Օրենսդրական խնդիրների ու բացթողումների կարգավորում.

- Համապարփակ և խորքային վերլուծության ենթարկել արտակարգ իրավիճակների ոլորտը կանոնակարգող ամբողջ իրավական դաշտը՝ ներառյալ Արտակարգ դրության ժամանակաշրջանում և դրանից հետո իրականացված փոփոխությունները: Մասնավորապես, անհրաժեշտ է իրականացնել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ու «ՀՀ բնակչության ըսանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համեմատական վերլուծություն՝ օրենքները ներդաշնակեցնելու և արդի մարտահրավերներին համապատասխանեցնելու նպատակով:
- Անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ՝ ՀՀ-ում մեկնարկած Սահմանադրական բարեփոխումների շրջանակներում սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:
- Իրականացնել հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակների հակազդման ոլորտի լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն:
- Կատարված վերլուծական աշխատանքի և միջազգային փորձի համադրման հիման վրա բարեփոխել արտակարգ իրավիճակների ոլորտի օրենսդրությունը: Մասնավորապես առաջարկվում է՝

- ✓ Օրենքի մակարդակում հստակեցնել Պարետի և Պարետատան իրավասությունները, սահմանել Պարետի և Պարետատան լիազորությունների և գործառույթների շրջանակը և համապատասխան իրավասությունը:
- ✓ Կամ՝ մշակել առանձին օրենք, որը կկարգավորի պարետատան հետ կապված բոլոր հարցերը և պարետի իրավասությունների շրջանակը:
- Հստակեցնել հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորաձարտակարգ իրավիճակների հակազդման գործիքակազմը, կիրառման դեպքերն ու մեխանիզմները: Դրա հիման վրա առաջարկել համապատասխան փոփոխություններ և լրացումներ իրավական ակտերում:
- Ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով կամ աշխատանքային խումբ՝ արտակարգ դրության ժամանակ յուրաքանչյուր պետական կառավարման համակարգի մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակայության կազմակերպությունների և հիմնարկների լիազորությունների և գործառույթների շրջանակը հստակեցնելու համար: Կատարված աշխատանքների հիման վրա օրենսդրական մակարդակում պետք է սահմանվի յուրաքանչյուր պետական կառավարման համակարգի մարմինի, տեղական ինքնակառավարման մարմինի, դրանց ենթակայության կազմակերպությունների և հիմնարկների լիազորություններն ու գործառույթները, ինչպես նաև՝ արտակարգ իրավիճակներում վերջիններիս արդյունավետ փոխգործակցության մեխանիզմները: Մշակել համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծեր՝ արտակարգ իրավիճակի պայմաններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները հստակեցնելու, դրանց աշխատանքի ներդաշնակությունը ապահովելու նպատակով:
- Հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված Արտակարգ իրավիճակներին հակազդման ծրագրերի հիման վրա համապատասխան նախապատրաստական միջոցառումներ ներառել աղետների ռիսկերի կառավարման պլաններում, իրականացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակայության

կազմակերպությունների և հիմնարկների անձնակազմերի պարբերական վարժանքներ.

- Մշակել օրենսդրություն՝ կարգավորելու հարևան երկրների հետ փոխգործակցությունը հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ: Նման օրենսդրությունը պետք է ուղիներ գտնի այս հաղորդակցությունը բաց պահելու առնվազն մարդասիրական նպատակներով: Այս անհրաժեշտությունը բխում է հանրային առողջության վերաբերյալ մտահոգությունից: Որպես այլընտրանքային տարբերակ կարելի է դիտարկել Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնները լրամշակելու և հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակներում արդյունավետորեն օգտագործելու հնարավորությունը:
- «Արտակարգ իրավիճակների իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում սահմանել մոնիտորինգի և գնահատման մարմնի պարտադիր ստեղծումը: Այս մարմինը պետք է իրավասու լինի մշտադիտարկելու և գնահատելու ՀՀ կառավարության և նրա ենթակայության մարմինների և կազմակերպությունների կողմից ձեռնարկվող քայլերը, որպեսզի արագ բարելավումների առաջարկներ անի:
- Ներդաշնակեցնել և հստակեցնել հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված առողջապահական և արտակարգ իրավիճակների մարմինների լիազորություններն ու գործառույթները: Մասնավորապես պետք է դիտարկել նախագծային փուլում գտնվող «Հանրային առողջության մասին» և «Աղետների ռիսկերի կառավարման մասին և բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքների ներդաշնակեցման հարցերը:

## **2. Արտակարգ իրավիճակների նախարարության (միավորումից հետո՝ Ներքին գործերի նախարարության) լիազորությունների և կարողությունների հետ կապված խնդիրների կարգավորում.**

- Հզորացնել Ներքին գործերի նախարարության կարողությունները ու հստակեցնել լիազորությունները:

- Ներդաշնակեցնել և հստակեցնել հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված առողջապահական և արտակարգ իրավիճակների մարմինների լիազորություններն ու գործառույթները:

### **3. Քաղաքացիական պաշտպանության համակարգի արդիականացում.**

- Առաջարկվում է արդիականացնել Քաղաքացիական պաշտպանության համակարգը և նախապատրաստել հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակներին:
- Ուսումնասիրել հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակների, արտակարգ դրության իրավական ռեժիմ կամ կարանտին սահմանելու դեպքում Քաղաքացիական պաշտպանության (աղետների ռիսկերի նախապատրաստման) համակարգի խնդիրները:
- Ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել առաջարկությունների փաթեթ՝ հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակների և աղետների կանխարգելման և կառավարման ուղղությամբ նախապատրաստական դասընթացներ և վարժանքների համակարգ ներդնելու ուղղությամբ:
- Մշակել հանրային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման և հակազդման հատուկ տիպային ծրագրեր: Դրանք պետք է հնարավոր լինի ադապտացնել պետական կառավարման համակարգի յուրաքանչյուր մարմնի համար, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի ռիսկի տարբեր մակարդակ:
- Ուսումնասիրել արտակարգ իրավիճակների հակազդման ոլորտի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման կարիքները, ներկայացնել առաջարկությունների փաթեթ այդ ոլորտի մարմինների կարողությունները զարգացնելու վերաբերյալ (կամ միջոցառումների ծրագիր):
- Իրավասու մարմինների հետ անցկացնել մասնագիտական քննարկումների շարք:



- Իրավասու մարմինների դիմումի դեպքում իրականացրել խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն:
- Իրավասու մարմինների դիմումի դեպքում իրականացնել օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման աշխատանքներ:

**4. Արտակարգ իրավիճակներում ոչ պետական կառույցների, ենթակառուցվածքների և կազմակերպությունների ներգրավման հետ կապված խնդիրների շտկում:**  
**Մասնավորապես առաջարկվում է՝**

- Ուսումնասիրել արտակարգ իրավիճակներում, արտակարգ դրության իրավական ռեժիմ կամ կարանտին հայտարարելու դեպքում ոչ պետական կառույցների, ենթակառուցվածքների և կազմակերպությունների ներգրավման հետ կապված խնդիրները, վեր հանել իրավական և գործնական բացերը և խնդիրները:
- Մշակել առաջարկությունների փաթեթ՝ արտակարգ իրավիճակներում ոչ պետական կառույցների, ենթակառուցվածքների և կազմակերպությունների ներգրավման հետ կապված խնդիրները լուծելու, վեր հանված իրավական և գործնական բացերը շտկելու վերաբերյալ:
- Ոլորտի հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների հետ իրականացնել հանրային քննարկումների շարք:
- Իրավական և գործնական մեխանիզմներ ստեղծել ոչ պետական գործընկերների կարողությունները արտակարգ իրավիճակներում արդյունավետ օգտագործելու համար, այդ թվում՝ օդանավակայաններ, երկաթուղային կայարաններ, սահմանային անցակետեր, բջջային օպերատորներ, բժշկական կազմակերպություններ:

**5. Արտակարգ իրավիճակների և կարանտինի ժամանակահատվածում ընդունված իրավական ակտերի բողոքարկման մեխանիզմների հետ կապված խնդիրների վերացում: Մասնավորապես անհրաժեշտ է**

- Արտակարգ իրավիճակի պայմաններում ընդունված իրավական ակտերի բողոքարկման գործուն մեխանիզմներ ստեղծել.
- Կարանտինի պայմաններում ընդունված իրավական ակտերի բողոքարկման

**6. Մարդու իրավունքների և հանրային առողջապահական ռիսկերի ու իրականացվող միջոցառումներ վերաբերյալ իրազեկվածության բարձրացում.**

- Արտակարգ իրավիճակներում ներգրավված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների համար մշակել «Արտակարգ իրավիճակներն ու մարդու իրավունքները» թեմայով դասընթաց՝ արտակարգ իրավիճակներում օրենքին համապատասխան գործելու և մարդու իրավունքները երաշխավորելու համար:
- Իրականացնել «Արտակարգ իրավիճակներն ու մարդու իրավունքները» թեմայով դասընթացների շարք արտակարգ իրավիճակներում ներգրավված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների համար:
- Ուսումնասիրել հարնային առողջապահական ռիսկերով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ որոշումների կայացման արդյունավետության, թափանցիկության և մասնակցայնության հետ կապված, ինչպես նաև այդ իրավիճակներում բնակչության իրազեկման հետ կապված իրավական ու գործնական հարցերը, ներկայացնել առաջարկություններ իրավիճակը բարելավելու վերաբերյալ.
- գործուն մեխանիզմներ ստեղծել: